

# ՍԱՂՄՈՍ 5

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Պաշտպանության աղոթք ամբարիշտներից <u>MT նախաբան</u> «Դավթի սաղմուք, գլխավոր երաժշտին, սրինգներով»	Առաջնորդության համար աղոթք	Անձնական թշնամիներից ազատվելու աղոթք (ողբ)	Պաշտպանության աղոթք	Առավոտյան աղոթք
5:1-3	5:1-3	5:1-3	5:1-3	5:1-2 5:3
5:4-7	5:4-6 5:7-8	5:4-6 5:7-8	5:4-6 5:7-8	5:4-5ա 5:5բ-6 5:7
5:8-10	5:9-10	5:9-10	5:9-10	5:8 5:9 5:10
5:11-12	5:11-12	5:11-12	5:11-12	5:11 5:12

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

# ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 5:1-3

<sup>1</sup>Ո՛վ ՏԵՐ, ակա՛նջ դիր իմ խոսքերին,

Ու՛շ դարձրում իմ մտորմունքին:

<sup>2</sup>Աղերսանքիս ձայնը լսի՛ր, ո՛վ իմ Թագավոր ու Աստված,

Քանի որ ես Քեզ աղաչում եմ:

<sup>3</sup>Ո՛վ ՏԵՐ, առավոտյան կլսես իմ ձայնը .

Առավոտյան *աղոթքս* Քեզ կուղղեմ ու դեպի վեր կնայեմ:

**5:1-2** Այս աղոթքը սկսում է երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ:

1. ակա՛նջ դիր իմ խոսքերին – BDB 24, KB 27, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. ու՛շ դարձրու իմ մտորմունքներին – BDB 106, KB 122, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ («մտորմունք» BDB 211, միայն այստեղ և Սաղմ. 39:3-ում «մտորել»):

3. աղերսանքիս ձայնը լսի՛ր – BDB 904, KB 1151, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Այս տերմինները սաղմոսերգուի կողմից վախ չեն արտահայտում, որ Աստված չի լսի, այլ երբայական գուգորդումներ են:

**5:1 «Ո՛վ ՏԵՐ»** Նկատե՛ք տիտղոսների գուգորդումները՝

1. Ո՛վ ՏԵՐ (ՅԱՀՎԵ, տես՝ Ելից 3:14)

2. իմ Թագավոր (տերմինաբանությունը ծագել է 1 Թագ. 8:7-ից, տես՝ Սաղմ. 84:3, հետագայում ռաբբիները ՅԱՀՎԵԻՆ անվանում էին «տիեզերքի Թագավոր»):

3. իմ Աստված (տես ստորև տրված գրառումը)

#3-ի համար կան «Աստված/աստված» տերմինի մի քանի տեսակներ: Լավագույն օրինակներից է 2 Օրինաց 32 գուխը:

1. 2 Օրինաց 32:3, 15 - (*Eloah*, BDB 42-43, տես՝ Սաղմ. 5:2)

2. 2 Օրինաց 32:5, 4, 18, 21 - (*El*, BDB 41-42, տես՝ Սաղմ. 5:4)

3. 2 Օրինաց 32:5:17 - (*Elohim*, BDB 43:44, տես՝ Սաղմ. 5:10)

Բոլորն էլ հիմնված են *El*, որը մատնանշում է գորություն և ուժ: Մա աստվածության ընդհանուր անունն է ՀՄԱ-ում /Հնագույն Մերձավոր Արևելքում/: Պոեզիայում բոլորն էլ փոխարինաբար կիրառվում են:

**5:3** Այս Սաղմոսը մատնանշում է առավոտյան աղոթք: Հետ գերության շրջանի հրեաների համար օրվա մեջ գոյություն ունեին մի քանի ժամանակային հատվածներ, երբ նրանք աղոթք էին արձրացնում:

1. առավոտյան գոհի ժամին՝ մոտ 9:00-ին (հավանաբար ըստ Սաղմոս 46:5բ-ի)

2. կեսօրին

3. երեկոյան գոհի ժամին, մոտ 3:00-ին

Այս հավատարիմ հետևորդն իր օրը կառուցում էր Աստծո ժամերին համապատասխան: Նա հավատում էր, որ Աստված լսում էր իրեն և պատասխանելու էր (այսինքն՝ «*դեպի վեր* կնայեմ», Սաղմոս 5:3բ, BDB 859 I, KB 1044, *Piel* ԱՆԿԱՏԱՐ):

Խորանի (տես՝ Ելից 29:38-42) և հետագայում՝ տաճարի ամենօրյա գոհերը տեղի էին ունենում առավոտյան և երեկոյան: Դրանք կոչվում էին «Ամենօրյա գոհաբերություն»: Սրանք հատուկ ժամեր էին, երբ ժողովուրդը մոտենում էր ՅԱՀՎԵԻՆ:

NASB

«ես կկարգադրեմ»

NKJV

«ես ուղղորդեմ»

NRSV

«ես կաղաչեմ»

TEV

«ես կմատուցեմ»

NJB

«ես կդնեմ»

LXX

«ես կպարզեմ»

Այս ԲԱՅԸ (BDB 789, KB 884, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) ունի լայն իմաստային դաշտ, սակայն հիմնականում նշանակում է «ինչ-որ բան կազմակերպել»: Այստեղ կարող է լինել (1) խոսքերը, կամ (2) գոհաբերությունը:

❖ «*դեպի վեր կնայեմ*» Այս ԲԱՅԸ (BDB 859, KB 1044, *Piel* ԱՆԿԱՏԱՐ) մատնանշում է ակնկալիքով սպասում ինչ-որ բանի համար, այստեղ ՅԱՀՎԵԻ պատասխանին՝ սաղմոսերգուի աղոթքին (տես՝ Ողբ 4:17, Միքիա 7:7):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 5:4-7**

**<sup>4</sup>Քանի որ Դու անօրենությունից ախորժող Աստված չես .**

**Չարը Քեզ մոտ չի բնակվելու:**

**<sup>5</sup>Անմիտները Քո աչքերի առջև չեն մնալու .**

**Բոլոր անօրենություն գործողներին Դու ատում ես .**

**<sup>6</sup>Սուտ խոսողներին կործանում ես:**

**ՏԵՐԸ զգվում է արյունահեղ ու նենգ մարդուց:**

**<sup>7</sup>Իսկ ես, ես Քո առատ ողորմությամբ Քո տունն եմ մտնելու,**

**Քո երկյուղով երկրպագելու եմ դեպի Քո սրբության տաճարը:**

**5:4-6** Սաղմոսերգուն նկարագրում է Աստծուն (*El*, «Ն», տես՝ Սաղմ .5:1-ի գրառումը):

1. Ես Աստված չեմ, որը հաճույք է ստանում անօրենությունից
2. ոչ մի չարիք չի բնակվում (մշտական բնակություն) Քո հետ (կարծում եմ Հակոբոս 1:17-ը աստվածաբանական գուգահեռն է)
3. անմիտները՝ պարծենկոտները չեն կանգնելու Քո աչքերի առջև (տես՝ Սաղմ .1:5)
4. Դու ատում ես բոլոր նրանց, ովքեր անօրենություն են գործում
5. Դու կործանում ես ստություն խոսողներին
6. Դու զգվում ես արյունահեղ ու նենգ մարդուց

**5:5 «Դու ատում ես»** Սա մեր համար ապշեցնելու չափ զարմանալի է, որ ՅԱՀՎԵՆ՝ Արարիչը, բոլոր մարդկանց հետ հաղորդակցվելու ցանկություն ունեցողը, «ատում է» (BDB 971, KB 1338, *Qal* ԿԱՏԱՐՅԱԼ): Աստվածաշունչը կիրառում է մարդկային տերմիններ, որպեսզի նկարագրի աստվածությանը: Սա միշտ լարվածություններ է ստեղծում: Տես՝ Հատուկ Թեմա. Աստված նկարագրված որպես մարդ (անտրոպոմորֆիզմ):

«Իր պատկերով ստեղծված» (տես՝ Ծննդ .1:26-27) մարդկանց հանդեպ Նրա սերը պատճառ է հանդիսանում հակառակ արձագանքի, երբ նրանց շփումը միմյանց հետ կործանարար է:

**5:7** Այս անհավատ հետևորդներին հակառակ, սաղմոսերգուն գիտի, որ ՅԱՀՎԵԻ «առատ ողորմության» շնորհիվ (տես՝ Սաղմ .6:4ը) երկյուղածությամբ երկրպագելու է Նրան խորանում՝ տաճարում:

«Ողորմություն» տերմինը NASB տարբերակի կողմից կատարած մի հզոր ուխտի տերմինի՝ *hesed* (BDB 338) թարգմանություն է:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED)**

**SPECIAL TOPIC: LOVINGKINDNESS (HESED)**

Այս տերմինը բազմանշանակ է: BDB այս բառն այսպես է բնութագրում (338-339) .

Ա. Կիրառված մարդկանց հետ կապի վերաբերյալ՝

1. բարեգթություն ընկերների հանդեպ (օր.՝ 1 Թագ .20:14, 2 Մնաց .24:22)
2. բարեգթություն աղքատի և կարիքավորի հանդեպ (օր.՝ Միքիա 6:8)
3. սիրային կապ (տես՝ Երեմ .2:2, Ովս .6:4)

4. վայելչություն (տես՝ Եսայի 40:6)

Բ. Կիրառված Աստծո կապի վերաբերյալ՝

1. ուխտի հավատարմության և սիրո համար
  - ա. «թշնամիներից և վտանգներից փրկվելիս» (օր.՝ Երեմ. 31:3, Եզրաս 27:28, 9:9)
  - բ. «կյանքը մահից պաշտպանելիս» (օր.՝ Հոբ 10:12, Սաղմ. 86:13)
  - գ. «հոգևոր կյանքի արթնության» համար (օր.՝ Սաղմ. 119:41,76,88,124,149,150)
  - դ. «մեղքից փրկվելիս» (տես՝ Սաղմ. 25:7, 51:3)
  - ե. «ուխտերը պահելիս» (օր.՝ 2 Մնաց. 6:14, Նեեմ. 1:5, 9:32)
2. նկարագրում է որպես աստվածային բնավորության գիծ (օր.՝ Ելից 34:6, Սաղմ. 86:15, 103:8, Նեեմ. 9:17, Հովել 2:13, Հովնան 4:2, Միք. 7:20)
3. Աստծո գթությունը՝
  - ա. «առատ» (օր.՝ Թվ. 14:18, Նեեմ. 9:17, Սաղմ. 86:5, 103:8, 145:8, Հովել 2:13, Երեմ. 4:2)
  - բ. «անսահման» (օր.՝ Ելից 20:6, 2 Օր. 5:10, 7:9)
  - գ. «հավիտենական» (օր.՝ 1 Մնաց. 16:34,41, 2 Մնաց. 5:13, 7:3,6, 20:21, Եզրաս 3:11, Սաղմ. 100:5, 106:1, 107:1, 118:1,2,3,4,29, 136:1-26, 138:8, Երեմ. 33:11)
  - դ. ամբողջի պես է (օրինակ՝ Սաղմ. 59:17)
  - ե. կապված է Աստծո գործության հետ (օրինակ՝ Սաղմ. 62:11գ-12ա)
4. գթության գործերը (օր.՝ 2 Մնաց. 6:42, Սաղմ. 89:2, Ես. 55:3, 63:7, Ողբ 3:22)

Այս բառը անգլերեն թարգմանություններում շատ տարբեր կերպերով է ներկայանում: Կարծում եմ լավագույն ամփոփիչ սահմանումը կարող է հանդիսանալ «Աստծո առանց տողատակերի ուխտի հավատարմություն» խոսքը: Այն համագոր է ՆԿ-յան «սեր» (*agapaō*) տերմինին: Աստված հավատարիմ է և սիրառատ իր էության շնորհիվ:

❖ «տաճար» Դավթի օրոք դեռ տաճար չկար: Սակայն այս նույն տերմինը (BDB 228) կիրառվում է 1 Թագ. 1:9-ում և 3:3-ում խորանի համար:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 5:8-10**

**<sup>8</sup>Ո՛վ ՏԵՐ, Քո արդարությամբ ինձ առաջնորդի՛ր իմ թշնամիների պատճառով:  
 Քո ճանապարհը հարթի՛ր իմ առջև,  
<sup>9</sup>Քանի որ նրանց բերանում ճշմարտություն չկա,  
 Նրանց ներսում չարություն կա:  
 Նրանց կոկորդը բաց գերեզման է,  
 Շողորորթում են իրենց լեզվով:  
<sup>10</sup>Դ՛ո՛ւ կործանիր նրանց, ո՛վ Աստված,  
 Թող ընկնեն իրենց խորհուրդներով .  
 Նրանց բազում օրինազանցությունների համար դու՛րս նետիր նրանց .  
 Քանի որ Քո դեմ ապստամբեցին:**

**5:8** Սա սաղմոսերգուի աղոթքի բովանդակությունն է Սաղմ. 5:1-2-ում:

1. առաջնորդի՛ր (*Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) ինձ Քո արդարությամբ (տես՝ Հատուկ Թեմա. Արդարություն)
2. Քո ճանապարհը հարթի՛ր (*Kethib* ունի *Hiphil*, մինչ *Qere* ունի *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ NET Աստվածաշունչ, էջ՝ 854, #4) իմ առջև («արդար» և «հարթ» տերմինները աստվածաբանորեն կապված են):

**5:9** Սաղմոսերգուն մտահոգված է իր թշնամիների խոսքերի և գործերի հարցում («թշնամիներ», Սաղմ. 5:8, BDB 1004):

1. նրանց խոսքերի մեջ ոչ մի վստահելի, ճշմարիտ բան չկա
2. նրանց ներսի մասերը՝ ներսն *ինքնին* չարությամբ է լցված
3. նրանց կոկորդը բաց գերեզման է
4. նրանք շողոքորթում են իրենց փափուկ լեզվով (տես՝ Սաղմ. 12:2)

Պողոսը մեջբերում է այս համարն իր աղերսի մեջ ՀԿ-յան տեքստերից, որոնք արտացոլում են Հռոմ. 3:10-18-ում նկարագրված մարդկության ընկած բնույթը:

**5:10** Սաղմոսերգուն խնդրում է Աստծուն գործել իր թշնամիների դեմ՝ նրանց խոսքերի և գործերի պատճառով:

1. կործանի՛ր նրանց – BDB 79, KB 95, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (արդարացման հականիշը)
2. թող ընկնեն իրենց խորհուրդներով–BDB 656, KB 709, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով:
3. BDB 623, KB 673, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (այսինքն՝ երկրպագության ժամանակ ՅԱՀՎԵԻ անձնական ներկայությունից, Սաղմ. 5:7 կամ փորձության ժամանակ, Սաղմ. 5:5):
4. քանի որ Քո դեմ ապստամբեցին – BDB 598, KB 632, *Qal* ԿԱՏԱՐՅԱԼ

Նկատել՝ որ սաղմոսերգուն կիրառում է տարբեր բառեր, որպեսզի նկարագրի իր թշնամիներին:

1. անօրեն, Սաղմ. 5:4
2. անմիտ, պարծենկոտ, Սաղմ. 5:5
3. անօրենություն գործողներ, Սաղմ. 5:5
4. ստություններ խոսող, Սաղմ. 5:6
5. արյունահեղ մարդիկ, Սաղմ. 5:6
6. նենգ մարդիկ, Սաղմ. 5:6
7. թշնամիներ (այսինքն՝ ովքեր դարանակալ են լինում), Սաղմ. 5:8
8. ամեն ինչում անվստահելի, Սաղմ. 5:9
9. կործանող վարքով, Սաղմ. 5:9
10. շողոքորթներ, Սաղմ. 5:9
11. օրինազանցներ, Սաղմ. 5:10
12. ապստամբներ, Սաղմ. 5:10

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 5:11-12**

<sup>11</sup>Բայց բոլոր Քեզ հուսացողները թող ուրախանան,  
 Հավիտյան թող ցնծան,  
 Քանի որ Դու նրանց պաշտպանում ես,  
 Եվ Քո անունը սիրողները թող Քեզնով հրճվեն:  
<sup>12</sup>Քանի որ Դու օրհնելու ես արդարին, ո՛վ ՏԵՐ,  
 Բարի կամեցողությամբ նրա չորս կողմը պատելու ես, ինչպես վահանով:

**5:11-12** Ամբարիշտ թշնամուն ի հակառակ սաղմոսերգուն այժմ բնութագրում է հավատարիմ հետևորդներին (այսինքն՝ ՀՈԳՆԱԿԻՆԵՐ, մի հոգու աղոթքը և փորձառությունը դարձավ բոլորի նկարագրությունը):

1. նրանք պաշտպանված են ՅԱՀՎԵԻ մեջ
2. նրանք ուրախանում են ՅԱՀՎԵՈՎ
3. նրանք ապաստարան են գտնում Նրա մեջ (կարծում եմ սա վերաբերում է էջ թռչնի փոխաբերությանը, տես՝ Հռոմ 2:12. Սաղմ. 17:8, 36:7, 57:1, 61:4, 63:7, 91:1, 4, տես՝ ստորև տրված Հատուկ Թեման):
4. նրանք սիրում են Նրա անունը և հրճվում Նրանով (տես՝ ստորև տրված Հատուկ Թեման):

Այս լույսի ներքո, ՅԱՀՎԵՆ՝

1. պաշտպանում է նրանց
2. օրհնում է նրանց
3. շրջապատում է նրանց վահանի պես (տես՝ 1 Թագ. 23:26)

Հավատարիմ և անհավատ հետևորդների միջև տարբերությունները կարելի է տեսնել նրանց պտուղների միջոցով (տես՝ Մատթ. 7:15-22):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՏՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**  
**SPECIAL TOPIC: SHADOW AS METAPHOR FOR PROTECTION AND CARE**

Սա երբայական դարձվածք է հետևյալի համար՝

1. «ստվերը» որպես պաշտպանություն՝  
ա. ՅԱՀՎԵԻ կողմից՝ Եսայի 16:3-4  
բ. Եգիպտոսից՝ Եսայի 30:2-3  
գ. ՅԱՀՎԵԻ Մեսիայի կողմից՝ Ողբ 4:20
2. «ձեռքի ստվերը», նաև ՅԱՀՎԵԻ պաշտպանությունը՝ Սաղմ. 121:5, Եսայի 49:2, 51:16, նաև՝ Ելից 33:22
3. «իմ տանիքի ստվերը/շուքը», պաշտպանության իմաստով մեկ այլ դարձվածք՝ Ծննդ. 19:8
4. «ՅԱՀՎԵԻ հատուկ ամպի ստվերը անապատում դեգերելու շրջանում» (այսինքն՝ ցերեկը ամպի ստվերը, գիշերը՝ լույսը առաջնորդում էին նրանց) – Ելից 13:21-22, 14:19,20,24, Եսայի 4:6, 25:4-5, 32:1-2
5. «թևերի շուք» - Աստծո համար երբայական այս դարձվածքը որպես մայր թռչուն՝ Սաղմ. 17:8, 36:7, 57:1, 61:4, 91:1,4, Ես. 31:5 (միևնույն նկարագրությունը 2 Օր. 32:10-11, Հռուբ 2:12, Մատթ. 23:37, Ղուկ. 13:34)
6. «Ծառի շուք»  
ա. Արիմեելի հետ կապված առակը՝ Դատ. 9:15  
բ. արծվի և գինու առակը՝ Եզեկ. 17:23  
գ. Եգիպտոսի առակը՝ Եզեկ. 31:6,17  
դ. Նաբուգոդոնոսորի երազը՝ Դան. 4:12  
ե. Իսրայելի գերության նկարագրությունը՝ Ովսեա 14:7

Ստվերը հզոր, կյանք փրկող փոխաբերություն էր անապատում ապրող մարդկանց համար:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ «ԱՆՈՒՆԸ» (ՀԿ)**  
**SPECIAL TOPIC: THE NAME OF YHWH (OT)**

«Անուն» բառի կիրառությունը որպես հենց Ինքը ՅԱՀՎԵԻն փոխարինող զուգահեռվում է Ելից 23:20-33 «հրեշտակ» բառի կիրառության հետ, որի համար ասվում է, որ ունի «Իմ անունը Իր մեջ»: Այս նույն փոխարինումը կարելի է տեսնել «Նրա փառքը» խոսքի կիրառության մեջ (օր՝ Հովի. 1:14, 17:22, տես՝ Հատուկ Թեմա. Աստված նկարագրված որպես մարդ): Այս բոլոր օրինակներն էլ փորձում են մեղմացնել ՅԱՀՎԵԻ մարդեղեն ներկայությունը (տես՝ Ելից 3:13-16, 6:3): ՅԱՀՎԵԻ մասին իհարկե խոսվում է մարդկային տերմիններով, սակայն նաև հայտնի է, որ Նա հոգով ներկա է ամբողջ Իր ստեղծագործության մեջ (տես՝ 3 Թագ. 8:27, Սաղմ. 139:7-16, Երեմ. 23:24, Գործք 7:49 մեջբերում է Եսայի 66:1):

Գոյություն ունեն «անուն» բառի մի քանի օրինակներ, որոնք ներկայացնում են ՅԱՀՎԵԻ աստվածային էությունը և անձնապես Նրա ներկայությունը:

1. 2 Օրինաց 12:5, 2 Թագ. 7:13, 3 Թագ. 9:3, 11:36
2. 2 Օրինաց 28:58
3. Սաղմ. 5:11, 7:17, 9:10, 33:21, 68:4, 91:14, 103:1, 105:3, 145:21
4. Եսայի 48:9, 56:6
5. Եզեկ. 20:44, 36:21, 39:7
6. Ամովս 2:7

7. Հովհաննես 17:6,11,26

ՅԱՀՎԵԻ անունը «կանչելու» հասկացությունը (այսինքն՝ երկրպագելու) երևում է Ծննդոցի ավելի վաղ շրջանում՝

1. 4:26, Սեթի սերունդը
2. 12:8, Աբրահամ
3. 13:4, Աբրահամ
4. 16:13, Հազար
5. 21:33, Աբրահամ
6. 26:25, Իսահակ

և Ելիցում՝

1. 5:22-23, Քո անունով խոսելու
2. 9:16, ամբողջ երկրում Իմ անունը պատմվի (տես՝ Հռոմ .9:17)
3. 20:7, Քո Տեր Աստծո անունը դատարկ տեղը չհիշատակես (տես՝ Դևտ . 19:12, 2 Օր . 5:11, 6:13, 10:20)
4. 20:24, Իմ անունը հիշատակվելիս (տես՝ 2 Օր . 12:5, 26:2)
5. 23:20-21, մի Հրեշտակ («որովհետև Իմ անունը նրա մեջ է»)
6. 34:5-7, Մովսեսը կանչում է (կամ «կանչեց») Տիրոջ անունը: Սա այն բազմաթիվ տեքստերից մի փոքր մասն է ներկայացված, որտեղ նկարագրվում է ՅԱՀՎԵԻ բնավորությունը (տես՝ Նեեմ . 9:17, Սաղմ . 103:8, Հովկ 2:13):

Ինչ-որ մեկին անունով ճանաչելը մատնացույց է անում մտերմություն (տես՝ Ելից 33:12), Մովսեսը ճանաչում է ՅԱՀՎԵԻ անունը և 33:17-ում Յահվեն ճանաչում է Մովսեսի անունը: Սա այն հատվածն է, որտեղ Մովսեսը կամենում է տեսնել Աստծո փառքը (տես՝ հ. 18), սակայն Աստված թույլ է տալիս նրան տեսնելու «Իր բարությունը» (հ. 19), որը համազոր է «անվանը» (հ. 19):

Իսրայելացիներին հրամայված էր բնաջնջելու Քանանի աստվածների անունները (տես՝ 2 Օր . 12:3) և Նրան կանչելու (տես՝ 2 Օր . 6:13, 10:20, 26:2) մի հատուկ վայրում, որտեղ Նրա անունն էր բնակվելու (տես՝ Ելից 20:24, 2 Օր . 12:5, 11, 21, 14:23, 24, 16:2, 6, 11, 26:2):

ՅԱՀՎԵՆ ունի տիեզերական նպատակ, որի մեջ ներգրավված է Իր անունը:

1. Ծննդ . 12:3
2. Ելից 9:16
3. Ելից 19:5-6
4. 2 Օրինաց 28:10, 58
5. Միքիա 4:1-5

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Սաղմոս 4-ը համարվում որպես երեկոյան Սաղմոս, իսկ Սաղմոս 5-ը՝ առավոտյան:
2. Սաղմոս 5:4-6-ից թվարկե՛ք ՅԱՀՎԵԻ հատկանիշները:
3. Հավատքի կյանքը նկարագրվում է որպես ճանապարհ, արահետ, ուղի: Ինչո՞ւ:
4. Նկարագրե՛ք ամբարշտին Սաղմ . 5:4-6 և 9-10-ից: